ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հունիսի 2016թ. թիվ 164-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՂԱՂԲՅՈՒՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ –ԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. ապրիլի 28-ի «Պաղաղբյուրի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին» N 448-Ա որոշման՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Վերակազմակերպել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի հիմնական դպրոց» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ները՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պաղաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միացնելով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին:

2. Վերակազմակերպվող ՊՈԱԿ-ների տնօրեններին՝

Կնքել միացման պայմանագիր, կազմել փոխանցման ակտ և դրանք ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետի հաստատմանը:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2016թ. հունիսի 2
ք.Վանաձոր